

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պաշտոնային համար 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտատպարանի » 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՈՒՄՈՒՄՈՒՄ

Համակ դրամ եւսյուն դրկել հետեւեալ հասցեով
ԽՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՌԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌԱՄ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на ВѢСТНИКЪ
„Ирaвункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խոստովանալով ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ներքին կը հրատարակուին անորոշ
քովին կամ մասամբ:
Մանուցեալ տողը 20 սանթիմ. երե-
ֆեմ անցի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ԳԵՐՄԱՆ ՎԵՋԱՊԵՏՔ

Ս. ՅԱԿՈՎԼԵՍՅԱՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Երուսաղեմէն թղթակից մը կը նկա-
րագրէ Գերմանիայի մեր Ս. Յակով-
բայ վանքը այցելելու:

Վանքի միաբանութիւնը իրեն զուտ
ունենալով Ս. Յարութիւն Պատրիարքը
խիստ փառաւոր ընդունելութիւն մը
ըրած են կայսեր, կայսրուհոյն եւ ի-
րենց հետեւորդաց: Կայսրական ամուլը
եւ հետեւորդը նախ տաճարն առաջ-
նորդուելով, ուղարկութեամբ գիտած
են պատկերներն ու նկարները, եւ յա-
ռաջանալով դէպի բեմը, ընտանեօք
հոն գեանդուած թանկագին եկեղեցա-
կան սպանիւրը ու շատ հին մագաղաթ-
եայ աւետարանները հետաքրքրութեամբ
գիտած ու գննած են: Բայց ամենէն
աւելի կայսրուհոյն զմայլման արժա-
նացած է հին կորուստ մը, զոր մի-
ջանի անգամ գիտել ու գննելուն պատ-
ճառաւ, Պատրիարքը ստիպուած է զանի
կայսրուհոյն նուիրել:

Թղթակիցը կ'ըսէ, «կայսերական ա-
մուլը մի միայն մեր վանքը եւ Պատրի-
արքարանն այցելելով, բացառիկ պա-
տիւ մը ըրած եղաւ. Ս. Յակովբայի
միաբանութեան»: Ուստի պատրիարքը
յարմար դատեց յիշեալ կորուստը կայս-
րուհոյն նուիրել ի յիշատակ իր այցե-
լութեան Հայոց Վանքը. Կայսրուհին
մեծաւ շնորհակալութեամբ ընդունեց
այս նուէրը:

Վանքի հիւրերը 20 րոպէի չափ Տա-
ճարին մէջ մնալէ վերջ, Պատրիարք
հօր առաջնորդութեամբ շրջագայած են
կարեւոր եւ նուիրական վայրերը. յե-
տոյ Պատրիարքարան ալ դայած են,
ուր կայսրը իր պապին, Վիկտորիայի
եւ իր հօր Ֆրէտէրիք Գ. ի նկարներն
ի մէջ ալցոց, տեսնելով «Ս», մեր գեր-
զատանը հոս է եղեր, մենք միայն
պակաս ենք» ըսած եւ խոստացած է
Պիլիքին հասնելէ յետոյ թէ՛ իր եւ թէ՛
կայսրուհոյն իւզաւորիկ պատկերները
զրկել իրենց յիշատակ իր այցելութեան:
Բայց իր այցելութեան յաջորդ օրը իր
մէջ մեծագիր լուսանկարը զրկած է
Պատրիարքարանին, որուն տակ իր
ձեռքով գրած է «Վիկտորիայի թագուոր
Բրուսիոյ, կայսր Գերմանիոյ, Երուսա-
ղէմ, 1 Նոյ. 1898»:

Կայսրը ու կայսրուհին, Պատրիար-
քարանի մէջ իրենց համար պատրաս-
տուած երկու գանձարն վրայ 10 վայր-
կեանի չափ հանդիսատէս տեսնելէ յետոյ
մեկնած են:

Պատրիարքը կայսեր հետ անգլիերէն
խօսած է:

Յարութիւն պատրիարք, Վանքի հիւ-
րերուն միւս պատրիարքարաններէն
առաջ Հայոց Պատրիարքարանն ըրած
այցելութենէն շատ զգածուելով եւ

Սուլթանին առաջին եւ առաջին
գորովալի բարեացակամութեան նոր
ապացոյց մը⁽¹⁰⁰⁾ նկատելով, անմիջապէս
հեռագիր մը ուղղած է Երուսղի պա-
լատն ու անահման երախտագիտու-
թիւն յայտնած է Սուլթանին:

ԳԵՐՄԱՆ ԱՅԻՆԵՐԸ

Քանի մը տարիէ ի վեր եւրոպա-
կան ազգերու մէջ Հայերէս ամե-
նէն աւելի տարածուած գերմանականն
է անտարակոյս: Անոր վեհապե-
տին վարչին ճամբորդութիւնը եւ
այն արտասովոր քնննչութիւնը
զոր իւր Սուլթանի բարեկամ զը-
տու ի թուրքիա, աւելի շեշտեց
այդ առիթով իւր հայ սիրտերու
մէջ: Ըստ երեւութի՝ ամենէն
հայտնայ, թուրքիոյ բոլոր քը-
րիստոնեաներուն խոր վիշտերուն
ամենէն անկարելի եւ իր անօրինակ
ոճիւններով պէգաւք միայն ազգե-
լու կարող թուրք բռնապետու-
թեան ամենէն աւելի թիկունք եւ
զոյզ եւ այս տեսակետով՝ բարոյա-
պէս ամենէն աւելի ինկած եւրո-
պական ժողովուրդը Գերմանացի-
ներն են:

Սակայն կեանքի մէջ յաճախ
երեւոյթը խորեպատիր է: Չգու-
շանանք ուրեմն միայն արտաքին
երեւոյթին համեմատ՝ Գերմանա-
ցիները գտնել իրենց բարոյա-
կան արժէքին մէջ, բաղդատմամբ
ուրիշ եւրոպական ազգերու եւ
խնդիրը քննել քիչ մը աւելի
հետազոտող միաքով:

Բայց «բձակ, այլ եւս անվիճելի
ճշմարտութիւն մըն է որ բոլոր
Եւրոպայի քաղաքականութեան
իմէն ոչ միայն, գոնէ ամենազգա-
ւոր հիմն, ամենահզօր շարժա-
ռիթը նիւթական շահն է: Եւ ու-
րիշ կերպ չէր կրնար ըլլալ այն.
պիտի ժամանակ մը, ուր ամեն ազ-
գայութիւն, կարելի է ըսել, ա-
մեն տիրապետութիւն մարդկային
ընկերութեան մէջ գրամին ձեռքն
առնած է, եւ ուր հոսի խնդիրը
բոլոր եւրոպական ժողովուրդներու
ահագին մեծամասնութեան համար
օրէ օր աւելի սուր կերպարանք
առնելու վրայ է:

Նիւթական շահը միեւնոյն ուժ-
գընութեամբ կը մղէ բոլոր տէրու-

թիւնները գործելու. դիւանագի-
տական սպարէզին մէջ. այն՝ Գեր-
մանիոյ համար մեծագոյն նշանա-
կութիւն չունի քան Անգլիոյ եւ
Ֆրանսայի համար: Ան, միեւնոյն
շարժառիթն է, որ բոլոր Եւրոպա-
յի ընթացքին ուղղութիւն կուտայ
Արեւելեան խնդրոյն մէջ: Բարե-
կամութիւն կամ թշնամութիւն
ինքնին գոյութիւն չունին քաղա-
քականութեան մէջ. եւ եթէ տէ-
րութիւն մը թուրքիոյ բարեկամու-
թիւն ցոյց կուտայ, մինչդեռ միւսը
աւելի հակառակորդի դիրք կը
բռնէ, այդ պարագայէն կը նշա-
նակէ թէ երկու տէրութիւններ
իրենց շահերու պահպանումը տար-
բեր ուղղութեան մը մէջ կը փոխուին,
սակայն երկուքին ալ նպատակը
նոյնն է, շահը, այնպէս որ ա-
նոնք կարող են, հանգամանքե-
րուն փոփոխութեամբ, իրենց գե-
րելը փոխանակել: Թուրքին այս
օրուն բարեկամը կրնայ մօտ ժա-
մանակի մէջ անոր յետեւի հակա-
ռակորդը, եւ անոր այսօրուն հա-
կառակորդը, ընդհակառակը, վաղը
անոր սերտ բարեկամը դառնալ: Եւ-
կար բացատրութեան պէտք չիկայ
ցոյց տալու համար թէ այս պայ-
մաններու մէջ, բարոյական տեսա-
կետով, երկու տէրութիւններն ալ
իրարմէ իսկապէս տարբերութիւն
չունին, բարոյապէս՝ հաւասարապէս
ցած մակարդակի մը վրայ կանգնած,
շահամոլութեան վրայ երկուքն ալ
հիմնած ըլլալով իրենց բովանդակ
գործունէութիւնը: Հիմնապէս Ե-
ւրոպա յարեւմտեան, արտաքին եւ
ընկերային միայն կը տարբերին Ե-
ւրոպէ:

Գերմանիա իր աշխարհագրական,
ինչպէս եւ Եւրոպայի քաղաքակա-
նութեան մէջ իր բռնած յատուկ
դիրքին պատճառաւ, թուրքիոյ
մէջ իր ազդեցութիւնը տարածե-
լու եւ իր շահերը առաջ մղելու
համար չունէր այն միջոցները զորս
ունին Անգլիա, Ռուսիա եւ Ֆրանս-
սա. ասոնց հետ չի պիտի կրնար
իսկ մրցիլ, եթէ միայն իր դիւա-
նագէտներուն ճարպիկութեան եւ
ժանուցազիրներու փոխանակու-
թեան վրայ իր յոյսը դնէր: Ստի-
պուած էր միւս տէրութիւններէն

տարբեր ուղղութեան մը մէջ իր
քաղաքականութեան համար յա-
տուկ յենարան մը փնտռել եւ զայն
գտաւ Թուրքիոյ հանդէպ անգղո-
ղութի բարեկամութիւն ձեւացնե-
լու մէջ:

Գերմանիա, ինչպէս նաեւ միւս
տէրութիւնները ոչ թրքասէր են
իսկապէս, ոչ թրքասեաց. շահա-
մոլ են ամեն բանէ առաջ, եւ ուր
որ իրենց շահը կը տեսնեն, հոն
կը փազեն անպայման:

Անգլիա Հայութեան վճռական
պաշտպանի եւ թուրքիոյ հանդէպ
շատ սպառնական դիրք մը առաւ
երբեմն: Բայց երբ տեսաւ որ ա-
նոր մէջ յամառիլ մնալ իր շահե-
րուն հակառակ պիտի դար, բա-
րոյական եւ խիղճ ոտքի տակ առ-
նելով, անմիջապէս փոխեց իր դիր-
քը, եւ բոլորովին անպաշտպան թու-
րք մեզ թուրքին հանդէպ ու-
րուն կատաղութիւնը միթիւնե-
րով ու ճառերով այնքան սաստ-
կապէս գրգռեց էր:

Ռուսիա, Արեւելքի քրիստոնե-
աներուն պաշտպանը, խղճահա-
րութիւն չլիցա իր անտարբեր լը-
ռութեամբ գոնէ անուղղակի կեր-
պով բաշխելու Հայերը կոտորող
ոճրագործները, երբ տեսաւ որ այդ-
պէս կը պահանջէին իր շահերը:

Ռուսիա եւ Անգլիա բարոյապէս
նուա՛զ դատաւարտելի են ուրեմն
քան Գերմանիա: Ինչ որ վերջինը
կրնէ, նոյնը պիտի ընէր ուրիշ ո
եւ տէրութիւն, որ գտնուէր մի
եւ նոյն դիրքին մէջ, միեւնոյն հան-
գամանքներէ շրջապատուած, քա-
նի որ Եւրոպա ալ դադրած է ի-
րաւունքի, արդարութեան, խղճ-
մտութեան եւ քաղաքակրթութեան
մէջ ալ մարդկութեան մեծ շահեր
տեսնելէ, զորս հարկ ըլլար պահել
ու պաշտպանել:

Բարոյական ահագին անկումը,
որուն գոնեակ պտուղները ուշ կամ
կանուխ հասունանալով, իրենց դառն
ճաշակով Եւրոպայի զղջումը եւ
քաղաքակրթութեան պիտի ըլլան, ընդհա-
նուր եւ հաւասար է բոլոր տէրու-
թեանց համար: Բարոյական առ-
ջեւ Գերմանիա ցածցած է ոչ ա-
ւելի եւ ոչ պակաս քան միւս մեծ
կոչուած տէրութիւնները:

Գ. Պ.

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ

(Շար. նախորդ քիսիկն եւ վերջ)

Խեղճ ուսանողին գանգատի գրել-խաւոր կէտը սա՛ է թէ, Նուպար բաշան բժշկական ու իրաւագիտական վարժարանաց հայ ուսանողներուն չօգնելը՝ այլ կը նպաստէ միայն իր սիրած մարդոցը և մեքենագիտական, երկրաչափական, գեղարուեստական ու գրական ճիւղերուն պարագող ուսանողներուն:

Թէ դրամատէր մը, իր դրամի սիրած մարդուն կուտայ ու չսիրածին չի տար, այնքա՛ն բնական բան մըն է որ չեմ դիտեր թէ ո՞վ պիտի համարձակի ատիկա մեղադրանքի տիտղոս նկատել բացի «Բիւզանդիոն»ի տղայ թղթակցէն ու նենգամիտ խմբագրագիտէն:

Իսկ թէ Նուպար բաշան փոխանակ բժիշկի ու փաստաբանի նըպաստելու, որոնցմէ լէգէոններով թիթում գլուխներ ունինք մեր ազգին մէջ, կուզէ յառաջ քշել այն պիտի երիտասարդներ որոնց հետեւած մասնագիտութիւնը տակաւին մեր մէջ ընդհանրացած չէ՝ այն պիտի խելացի, հեռատես և ազգասիրական տնօրինութիւն մըն է որուն համար բաշային որքան գովեստ շուռլենք դարձեալ քիչ է:

Թո՛ղ մեզի ցոյց տրուի հայ գրամատէր մը որ բարեգործութիւն ընելու ընկալեալ սովորութենէն չեղելով, ինչպէս Նուպար բաշան, իր դրամը յատկացնէր Ազգին մէջ պակասը չգոցուած կարգ մը կենսական բացերու իրագործումին:

Դիտողութեան կամ քննադատութեան ուրիշ մէկ կէտն ալ սա՛ է որ իբրեւ թէ բաշան արտասահմանի հայ գաղթականներուն չէ նպաստել, այլ շատացիր է լոկ աւսաստանարան մը բանալով Բարիդի մէջ: Ատիկա ալ բացարձակ սուտ մըն է: Մեր մասնաւոր տեղեկութեանց համեմատ, որոնց ստուգութիւնը կատարելապէս երաշխաւորուած է, բաշան ո՛չ միայն արտասահմանի հայ գաղթականներուն առատապէս նպաստած է, այլ և մտածած է Մայր հայրենիքի հայերն ալ, իզմիրեան պատրիարքի պաշտօնավարութեան օրով, միայն Աղեքսանդրիայէն 1600 ոսկի զրկուեցաւ Հայաստանի տառապեալներուն համար. այդ գումարին մէջ Նուպարեան գերդաստանը դնահատիկ բաժին մը ունէր: Բաշան նպաստած է թէ՛ երկրի և թէ՛ արտասահմանի համար աշխատող անգլիական և ուրիշ նպաստամատոյց մարմիններու: Եգիպտոսի հայ գաղթականներուն համար Ն. վսեմութեան, իր որդւոյն և իւր փեսին տուած նպաստներուն համագումարը երկու հազար ոսկին կ'անցնի: — Իսկ իր Բարիդի աւսաստանարանին համար, որը գրել-խաւորաբար աղքատ հայ ուսանողներուն յատկացուած էր, բաշան ծախսեց անհաւատալի գումար: —

Թէ ի՞նչ ապերախտութեամբ վերաբերուեցան պատապարեալները հանդէպ իրենց բարերարին՝ շատ տխուր է այստեղ յառաջ բերել: Անսովոր տակ զիրք մը առնողը ներկայացաւ իբրեւ ուսանող. հանգստաւէտ անկողին, սննդաբար կերակուրներ և վարժարանական քըննութեանց կամ մուտք անունով դրամական նպաստներ, բան մը չի պակսեցաւ իրենց. ու այդ «ուսանողները» բաշայէն առած դրամներն հանրային տուններու մէջ կերան ցրտութեամբ և հուսկ ուրեմն սպառնական դիրք առին բաշային հանդէպ: Անշուշտ բաշային ո՛չ դիրքէն, ո՛չ առողջական վիճակէն, ո՛չ ալ յառաջացեալ տարիքէն կըրնար պահանջուիլ ներկայացող անձերը մի առ մի քննութեան ենթարկել և արժանաւորը բաղդալնդիլէն ջոկել, բան մը որ արդէն ունէն ատեն կարելի ալ չէ: Այսու ամենայնիւ երբ բաշան տեսաւ որ իր վեհանձնութիւնը չարաչար կը գործածեն, Ապաստանարանը վերջի վերջոյ խտրազանով մաքրել տալու տխուր հարկին մէջ գտնուեցաւ: Զարմանալի չի թուի ուրեմն այն տեսակ մը անմաստհոյութիւնը զոր բաշան այդ օրերէն ի վեր ունեցաւ կարգ մը «ուսանող»ներու մասին:

Բայց Նուպար բաշայի իրական մեծութիւնը և արժանիքը իր գրութեական նպաստներուն մէջ պէտք չէ փնտել: Խոսքիցի խմբագիրը իր հրեայ սարրաֆի մակարդակէն քիչ մը վեր բարձրանալու էր այդ անստղծական անձնաւորութեան փառքի տիտղոս մը փնտելու ատեն:

Դրամը շատ անգամ կը դիպի ողորմելի մարդոց քով որոնց համար ազգասիրութիւն և մարդասիրութիւն ընելը քանի մը ափ ոսկի հոս ու հոն ցանցնելու մէջ կը կայանայ ու մեր չտես խմբագիրներն ալ մինչև Խօթնորդ երկինք կը բարձրացնեն այդպիսիները: Ոչ, Նուպար բաշայի արժանիքը տաւոր մէջ չէ, ինչպէ՛ս չէ քիչնոյսի: —

Նուպար բաշան, իբրեւ իրապէս զարգացած և հայրենասէր անձնաւորութիւն, իր մտածութեանց առարկայ ըրած է, հայ ազգին ընդհանուր կացութիւնը և շատ իմաստուն միջոցներ ընարած է անոր աստիճանական բարեբան համար:

Բաշային ուշադրութեան հանդիպող առաջին կէտը սա՛ էր թէ որ հայերը գրեթէ բնաւ ծանօթ եղած չեն Եւրոպայի ազգերուն և ասիկա մեծ պոկոս մը նկատած է զոր դարմանելու ձեռնարկած է շատ տարիներ առաջ, երբ մեղմ շատերը դեռ ծնած չէին կամբուռի մէջ էին: Հաստատապէս համոզուած ըլլալով որ հայերու վիճակին բարեփոխումը եւրոպական միջամտութեան շնորհիւ միայն իրականաւր է, բայց թէ այդ միջամտութիւնը կրնայ յապաղիլ երբ հայերը իբրեւ ազգ արժանաւորապէս ներկայացուած չեն Եւրոպա-

յին, իր առաջին գործը եղած է հայ պատմագիրները ֆրանսերէնի թարգմանել տալ Շահնազարեան կարապետ վարդապետի ձեռքով և զանոնք առանձին առանձին հատորներով հրատարակել տուած է, ծախքն ամբողջապէս ինքը հոգալով: Սատարած է Մխիթարեան հարց բանասիրական և հնախուրդական կարգ մը հրատարակութիւններուն և դեռ վերջերս իր սեւեռեալ գաղափարին պինդ փառած, քաջալերած է այն ամեն օտար լեզուով հրատարակութիւնները որոնք հայ ազգը կը ծանօթացնէին Եւրոպային, իր չարչարանքներով ինչպէս իր մտաւոր և հոգեկան արժանիքներով:

Բայց աներկբայի կերպով Նուպար բաշայի փառքի մեծագոյն տիտղոսը Պէրլինի վեհաժողովին ներկայացուցած բարեկարգութեանց ծրագիրը պիտի մնայ որը արդէն պատուիրակներուն կողմէ ընդունուած էր և որուն գործադրութիւնը ո՛չ միայն հայերուն վիճակին մէջ հիմնական փոփոխութիւն մը պիտի կրնար յառաջ բերել, այլ և հեռաւոր ապագային համար ալ յոյսի հաստատուն կրուած մը պիտի դառնար: Ափսոս որ մեծագոյն հայ գիւտնագէտին հեռատես հայրենասիրութիւնը մեր տիրացու ազգասիրներուն ընդդիմութեանը հանդիպելու և այնքան դիպիկ մտածուած ու կերտուած չէնք մը փառք, կործանեցաւ:

Նուպար բաշային այս գործը հիթ չիրականացաւ, յանցանքը մեր թեթիւ ժողովրդինը եղաւ որ քաղաքական դաստիարակութեան մէջ ունեցած խորին տգիտութեամբ, իր ծոցէն ծնած հաղուագիտ հանճարներու խորհուրդը, ձգտումները, ծրագիրները արհամարհելու սխալը, չստեղծ համար ոճիրը կուեննայ, և վարկապարտի դատողութեամբ մը այդպիսիները կ'որակէ անազնիւ մակդիրներով:

Բայց այսօր տարիներ անցնելէ յետոյ, ճշմարտութիւնը այլեւս կ'ընդհանրանայ և ամենքը համամիտ են ողբալու այն տխուր մերժումը զոր ազգովին ըրինք Նուպարի ծրագրին: Միեւնոյն ատեն սակայն մեր սխալը ճանչնող զմեռաւելի կը սիրենք ու կը յորդենք զինքը, և աւելի կ'սքանչանք իր մտքի մեծութեանը վրայ:

Այսչափ միայն կարծեմ բաւական է՝ Նուպար բաշային հայրենասէր անձի անունը մը թողելու իր մահէն յետոյ:

Դժուարահաճ միայն Պ. Քէչեհանն է որ միտք չունի դամբանական յօդուած գրելու եթէ բաշան կանխաւ իր ոսկիներուն հաշիւը չի տայ «Բիւզանդիոն»ի խմբագրագետին: . . . Միւր կարծիքով բաշան աւելի օգտակար գործ մը պիտի ընէ՝ Քէչեհան էֆէնտին յօդուածի փոխարէն ստանալ երազած քանի մը ոսկին իր կօշիկները ներկողին կտակելով, ի մեծ յու-

սախաբութիւն «մեծանուն խմբագրագետին»:

Պ. Քէչեհան դրամական ակնկալութիւնէ զատ ուրիշ նպատակ մ'ալ ունի Նուպար բաշան քննադատելու տխուր դերին մէջ:

Գիտէ՞ս որ դիզ մը աւելի կը բարձրանան իր հաւատարմական զգացումները հանդէպ օսման հանգստին, զի Նուպար բաշան ատուած անձնաւորութիւն մըն է օսմ. կառավարութեան: Ն. վսեմութեան Պէրլինի վեհաժողովին ներկայացուցած ծրագիրը եթէ հայ ազգը չհասկցաւ, թիւրք կառավարութիւնը սակայն շատ աղէկ հասկըցաւ և այս պատճառով քէն քէն ունի Ն. վսեմութեան դէմ, առանց հաշուելու Եգիպտոսի գործերը որոնց մէջ ունեցած ուղղութեանը համար ո՛չ միայն Եգիպտոսի ամբողջ ֆէլլահ դասակարգը իբրեւ հասարակաց հայր կը պաշտէ զինքը այլ և թագուհու հայր կառավարութիւնը նալ խորին յարգանք և համակրանք կը տածէ իր մասին:

Այս ամենքէն յետոյ ընթերցողին կը մնայ դատել թէ ի՞նչ անուն պէտք է տալ Պ. Քէչեհանի խմբագրականին:

...

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Ընկերական կարգ ու սարսիկ անկեղծ անխախտ խաղաղութիւն երիտասարդութեան բարոյական դաստիարակութիւնն է:

ԿԻՉՕ

(Շար. նախորդ քիսիկն)

Ասոր հակառակ, իմաստուն ու փորձառու մարդոց հասարակութիւնը միշտ ոգեւորիչ ու կազդուրող է: Անոնք իրենց փորձառութեամբ կ'անցնեն մեր կեանքի գիտութիւնը: Մանուկը կը հետեւի անոնց կարծիքներուն եւ հաղորդ կ'ըլլայ անոնց իմաստութեան: Անոնց աչքերու օգնութեամբ իր յատուկ գիտողութեանց շրջանակը կ'ընդարձակուի, ուսանելով ոչ միայն անոնց բաղդը ու արիւնքը, այլ նաեւ անոնց կրած վիշտն ու չարչարանքը: Այս պատճառաւ է որ մեծ եւ հանճարեղ գիտուններու, քաջ ու անձնուրաց հերոսներու, խանդավառ ու իսկապէս բանաստեղծներու կենսագրութեանց ընթերցումը միշտ յանձնարարելի է զգալարեականներու համար: Կենսագրութեանց ամենագլխաւոր օգուտն այն է որ ցոյց կուտան թէ ի՞նչ կրնայ ընել մարդ մը եւ մինչև ո՛ր բարձրանալ: Անիկա կ'ոգեւորէ պատանին, թոյլ կուտայ անոր յոյսերուն, նոր հաւատք ու եռանդ կը ներշնչէ դէպի իր անձը: — Մարդիկ չ'զիպցեալ խոճապներու պէս, կ'անցնին, կ'անհետանան ժամանակին համայնակուլ անգրութեան առջեւէն, առանց իրենց ստուերն իսկ ձգելու երկրի վրայ: Բայց մեծ անձնաւորութիւններն, իրենց մահուանէն ետքն ալ, ցուրտ գերեզմանի խորէն հրաւեր կը կարգան մեզի ոտք դնելու իրենց անցած ճամբուն վրայ: — Պատմութիւնն իսկ շարք մըն է նշանաւոր անձերու կենսագրութեանց: Եւ ազգերու, ինչպէս անհատներու կեանքը փորձառութեան հարուստ թանգարան մըն է որ իմաստութեամբ գործածուեալ

լով կատարելութեան ձգտում կը ներ-
շնչէ, իսկ չարաչար գործածուելով ա-
ռաջ կը բերէ փառասիրական թարմա-
տար մարմաջ, մոլութիւն ու զօսու-
թիւն: Հայրենիքը խիստ ներած ազգե-
ցութիւն մը ունի մանկան վրայ, զոր
կ'արժէ առանձին ուսումնասիրել:

Թէեւ մանուկին վրայ միջավայրին
ազդեցութիւնը անզգալաբար կը կա-
տարուի, բայց անհրաժեշտ է զայն կան-
խաւ գիտել առողջ սկզբունքներով որ-
պէսզի զինքը չընկալատուի իրեն
բարձր չի հասնելու Պէտք է առաջին
ճառքին վարժանքները առանձին իր
ճամբան հարկելու գործին, որպէսզի
յառաջիկային, կեանքի նպատակը որ-
շեւու առնել, իր յատուկ գործունէու-
թեան եղանակն ունենայ, առանց ըն-
կերներու ընթացքին հետեւելու: Պէտք
է մանուկին հոգեւոր մէջ ամրացնել
կամքի ուժն ու ազատ գործելու կարո-
ղութիւնը, եւ վարժանքները զայն խիշ-
խօրէն վարելու, որպէսզի սխալի իր
ընտրութեանց մէջ: Կամքի թուու-
թեամբ է որ բազմաթիւ երիտասարդ-
ներ իրենց կիրքերուն գերին կամ ու-
րիշներու ստրուկը կը դառնան:

Բայց ժամանակ անցնելով նոր ազ-
գակ մըն ալ կը սկսի աւելնալ մանկան
հոգեւոր վրայ, նոյնքան անհրաժեշտ եւ
միանգամայն նոյնքան անաւոր: Այդ
ուժը մալինայն է. հաւասարապէս կա-
րող մեծագոյն չարքն ու մեծագոյն
բարքն ընելու. պահպան հասարա-
կաց ազատութեան եւ անոնց անդիմա-
զրելի ապականողը. քաղաքական ի-
մասնութեան եւ խաղաղութեան խոր-
հրդատու, եւ միանգամայն անհամա-
ձայնութեանց եւ վատնաբար բախ-
տախտութեանց բացարձակ տէրը:
Ոչ մէկ զօրութիւն իրենին կը հաւա-
սարի: Ժողովրդական դատարարաւոր-
ութեան տարածուելէն ի վեր, անկա-
պէս է ճշմարիտ գրիչը: Ըլլալ ամբո-
խին եւ միակ զսպանազն առէս ամսակ
ժողովրդական շարժումներու: Դրքեր
կան որոնք պատերազմներէ աւելի սաս-
տիկ յեղաշրջումներ յառաջ բերած են
հասարակութեան մէջ: Դեռ իր սակմ-
նային վիճակին մէջ էր մամուլը, երբ
Ռապրէ՛՛՛ ֆրանսայի մէջ եւ Սերվատ-
դէս՝ Սպանիոյ մէջ միանգամայն խոր-
տակեցին արեղաներու եւ աստիաներու
գերիշխանութիւնը, լոկ իրենց հագնոր
ծիւնադրով: Կը վիճի, կը քարոզէ, կը
վարդապետէ անգլիա եւ անգլիայի, ա-
մէն առաւօտ եւ ամէն երեկոյ խօսելով
ամբողջ աշխարհի, ամէն անոնց որոնք
կարող ալ գիտեն, միշտ ալլազան շեշտե-
րով ու բոլորովին տարբեր լեզուներով:
Ալ կարելի է մամուլին համար ըսել թէ
կը բարձրացնէ կամ կը խոնարհեցնէ
ազգութիւնները, եւ միեւնոյն ժամա-
նակ ինքն ալ ազգին ընդհանուր կա-
ցութեան փայլուն արտայայտութիւնն
է: Ի՞նչ է մամուլը մեր ազգին մէջ.

անկման ու քայքայումի ազգա՞կ մը թէ
իմաստութեան ու համեմատութեան
խորհրդական: Հասարակաց բարութեան
ու ճշմարտութեան սէ՞ր կը ներշնչէ,
թէ ստութեան ու կեղծիքի թարգման
կը հանդիսանայ: Վերջապէս այս հսկայ
զանգուածը կենդանի ո՞ւժ մըն է ազ-
գին համար, որ զայն կարողանայ ապ-
րեցնել, թէ ոչ գէպի մահ կ'առաջնոր-
դէ զայն: Եթէ գիտենք ամէն օր սո-
փետական վարդապետութիւններն ու
ստիպիկ ճոռոմարանութիւնները, թըշ-
նամական գրգռումներն ու զոռամած
բարքերու շնական քարոզները, ակա-
մայ պիտի համազուի՞նք թէ՛ մամուլը
փճացումի եւ ալլապետման ուժ մը եղած
է: Բայց կը միւթարուինք խորհելով
որ իր լուսնիւն արգելք պիտի ըլլար
խօսելու փրկաւէտ ձայներուն, որոնք,
եթէ չեն կրնար ապականիչ տարրերը

խեղդել, գէթ անոնց ազդեցութիւնը
կը չեղբացնեն: — Որքա՞ն երիտա-
սարդներ մասնաւորապէս հրատարակ-
ուած լրագրաց տարակերտով զբոսի-
կամ թոյն-դաշտանային վէպերու ազ-
դեցութեան տակ՝ իրենց անտիական
խանդավառ արքայի՛ կորսնցորդն են ի-
րենց կորովն ու ուղղութիւնը:

Դեռաւոր պատանիներու եւ չափահաս
երիտասարդներու վրայ ներդրող ըն-
կերական անհունապէս բազմազան ազ-
դակներու այս հակոթ հանդէսը, ինք-
նին իրաւական համոզիչ է արդէն ցոյց-
նելու համար այն համեմատութիւնը
որով մարդկութեան անձնիւր անհատը
անհրաժեշտօրէն կապուած է իր նմա-
նին, եւ այն բարոյական անխուսափելի
ազդեցութիւնը՝ որ յանդէստ կը ներ-
գործէ մին միւսին վրայ: Այս պատ-
ճառաւ իսկ ամէն մարդիկ, ինչպէս
ամէն տարբերութիւն, ստակական կեան-
քի սահմաններէն դուրս ելլելով՝ զգալի
կ'ըլլայ հասարակաց կեանքի մէջ ալ:
Մեքենագիտութեան այն օրէնքը թէ
ազդեցութիւնն ու հակազդեցութիւնը
իրարու հաւասար են, իր համապատաս-
խան օրէնքն ունի նաեւ բարոյական
աշխարհի մէջ: Հերիք է որ մարդիկ ի-
րարու հետ փոխադարձ արարեցութիւն-
ներու մէջ ձգուին, ու այնուհետեւ ո՛չ
փախչելու բաժանումը կ'արգիլէ զանոնք
մէկմէկու նմանելու, ո՛չ ալ վիճակներու
տարբերութիւնը: Ապականեալ բար-
քերը, մահացու համաճարակի մը պէս,
ո՛ր դասակարգի մէջ որ մտնեն, իսկոյն
ամենուն կը տարածուին եւ ամբողջ
ժողովրդին հիւանդագին կացութեան
յայտարար նշանն են: Լաթի ու մեղմիւ,
անոնք կը սկսին ընկերութեան շէնքէն
մի առ մի քնցել բոլոր քարերը ու խը-
զիլ անոր բոլոր կապերը, ընտանեկան,
կրօնական ու ազգային, ու քիչ քիչ
խոշորնալով ստուերին մէջ, մոլութեան
այս գանձարանը յանկարծ կը պայթի,
երբ լեցուն է, փոթորիկի մը պէս ո-
րուն շունչը կ'ալկոնէ ու կ'աւել ազ-
գիւրը դարկուր առնելէն:

(Շարունակելի)
Էտոն Սարգսեան

ԼՐԱՅՈՒՆՔ

Սերասալոյ մէջ բացուելիք որբանո-
ցին համար Գեր. Պետրոս Եպիսկոպոս
120 որբեր արգէն գրկած է Ամասիոյ
եւ Երզնկայ վիճակներէն, առ այժմայս
տարաբազմ մանկիկները ալ եւ այլ բա-
րեւէր անձերու տուններն հիւրընկալ-
ուած են, 30 որբեր ալ ազգ. Որբա-
նոցին մէջ կը խնամուին, կը լսուի
թէ որբերու թիւը մինչեւ 200-ի պիտի
բարձրանայ, բայց չի գիտցուի թէ
այդ որբերը շարունակ բարեւէր ան-
ձանց տուններուն մէջ պիտի մնա՞ն թէ
ամենին բաւելու չափ ընդարձակ ու-
բանոց մը պիտի հաստատուի. ասոր
համար դեռ ո եւ է պատրաստութիւն
չի կայ:

Դուրեան, Իթիւնեան, Աշոտ եւ
Շիրակունի վարդապետներն եպիսկո-
պոս ձեռնադրելու պահուն Վի. Հայ-
րիկը քարոզ մը խօսելով զանոնք այս
կերպով խրատած է «Հա՛, եպիսկոպոս
էք ըլլում, աղքատ մը եկած ժամանակ,
չասէ՛ք, «Հա՛, տառաջնորդ տունը չէ,
տառաջնորդը քնած է, տառաջնորդը գործ
ունի, տառաջնորդը հոս չէ, տառաջնորդը
չի ընդունիր»:

Անցեալ չորթու Պալլըքէսէրի մէջ
մեծ հրդեհ մը ծագած լինելով, 200-ի
չափ տուններ եւ խանութներ այրած է-
ին. Պատրիարքարան հասած հեռագիր
մը իմացուցած է թէ՛ այդ հրդեհէն
այրած են եկեղեցական քանի մը կալ-
ուածներ ալ, Հրդեհի պատճառած վը-

նան 30000 ոսկիէ աւելի է կըսուի.
այրած չէ՞քերուն միայն 10-ը խաւանաց
լսի մնացեալը քրիստոնէից կը վերա-
բերին: Հրկիզելոց հաց, պանիր, հէլ-
վա, ածուխ եւ կրակարան կը բաշ-
խուին:

Ֆիլիպպէն մեղ կը գրեն թէ Գեր.
Արսէն վարդ. Վեհունի հոն հասած է:

Ս. Բեթրակովէն Նոր Դարի կի-
մացնեն թէ՛ հոն հայոց վերաբերեալ
պատկանելի դիրքով ուստիքէն մի նոր
գիրք լոյս տեսած է. «Պետրոս մեծի
յիշատակութիւնը հայ ազգի հետ»:

Աշխատասիրող եւ հր. տարակոյն է
գրաբարագէտ—բանասէր Նիսի Կարա-
պէտ Եղանան, որ պետական գիւնա-
տուններու մէջ գտնուելով, գիւրութիւն
ունեցած է պաշտօն ալան ամբարներէ
եւ արձանագրութիւններէ հաւաքել ու
խմբագրել Մեծի Պետրոս Կարապետի
Հայոց ազգին ուղղուած բոլոր վառե-
րական խղիւղներն ու պաշտօնական զը-
րութիւններն:

Կը յուսանք թէ՛ հրատարակչական
ընկերութիւնը, կը փութայ ամեն հա-
յու համար հետաքրքրական այդ գիրքը
հայերէն ալ հրատարակել:

Պաթմուէն կիմայենն թէ փո-
թիւ, Խիֆլիսէ եւ ուրիշ տեղե-
րէ շատ մը գաղթական հայեր Պա-
թմուի ճամբով հայրենիք վերա-
դարձեր են ռուս ոստիկանապետի
միջոցաւ, որ անցողիկն ու նաւի
տոմսակներն ձրի տուած է: Այդ
հայերը Տրապիզոն ելնելով, զօր-
քերու առաջնորդութեամբ իրենց
հայրենիք կուղենալին:

Հոկտեմ. 24-ին Սոսկուաի Լա-
յուրեան Ճեմարանի տարեկան հաւն-
դէսը շքեղ կերպով կատարուեցաւ.
նոյն հաստատութեան նախապատ-
րաստական դաստիարակներուն մէջ
հին եւ նոր հայերէն լեզուն կը դա-
սախօսուի: Վերապաւսուցը յիշա-
տակեց որ Ճեմարանին յիստամ-
եակը լրանալուն առթիւ, հաստա-
տութեան մասնադիւտական դասա-
րաններու խորհուրդը ձեռնարկել
է թ. դարու հայերէն հին աւե-
տարանի մը հրատարակութեան,
ընդ հսկողութեամբ բրոքէսէօր
խալաթեանի. այս ձեռնարկու-
թեան համար ճեմարանի պատուոյ
հոգաբարձու հրամանատար իշխան
Ս. Ս. Աբամելիք-Լալարեանը 1800
լուպի նուերիւր է: Հանգէսը գո-
ցուած է աշակերտաց մի քանի հա-
յերէն եւ ռուսերէն երգերով:

Պաթմուի մէջ հայ մը իր
սենեակը պառկած ատեն, տան
զիշերապահը յանկարծ ներս մտնե-
լով զայն խեղդեց է. ոճիրը ան-
միջապէս դրացիներէն իմացուելով,
մարդասպանը ձերբակալուած է
ոստիկանութեան յանձնուած է:

Գեորգեան ճեմարանի աշա-
կերտներէն 10 երիտասարդներ կա-
թողիկոսէն սարկաւազի ուրար ըն-
դունեցին, որոնց 6ը քահանայ եւ
4ը կուսակրօն պիտի ըլլան:

Պարսկաթրքական սահմանազը-
խէն նամակ մը հասած է մեղ, զոր
մեր յառաջիկայ թիւով պիտի հը-
րատարակենք:

Հրապարակաւ խորին շնորհակալու-
թիւնս յայտնելու կը դամ այն ամէն
յարգելի եւ ազնիւ բարեկամներին եւ
ճանօթ անձնաւորութիւններին, որոնք
թէ Ռուսաստանի եւ թէ Բուլղարիոյ
զանազան քաղաքներում, վերջերս կա-
տարած ճանապարհորդութեան ժամա-
նակ, երկար ատեն ինձ իրենց հիւր
լինելու պատիւը վայել տուին, չնա-
յելով յամենայն դէպս իրենց բարոյա-
կան եւ նիւթական աջակցութիւնը:
Շնորհակալ եմ նոյնպէս որ նորից չը
խնայեցին ինձ իրենց օժանդակութիւնը
Բուլղարիայի մինչեւ եգիպտոս ճանա-
պարհորդելու համար:

Ոսկան Նազարեանց
1898 սեպտ. 17/29
Գահիրէ:

ՄԱՔԷԹՈՆԻԱ

Նոյեմբ. 10 թարիխէ Սթան-
պուլտան թան կազէթասընա եւ.
զըմըշ տըր:

Նոյեմբ. 5 թարիխի թէլէկրա-
ֆըմէ պիտիւրմիշտիքի՝ Տէվլէթ-
լէրին տըգգաթը Մաքէթոնիանըն
հսկալընա աթֆ օլընմըշ տըր:
Մաքէթոնիանըն շիմտիքի ինթի-
զամըզ վէ գարըըզ հալի Էլփո-
բանըն սուհընը թէհիլթէյէ իզգա
իտէճէկինտէն, տէվլէթլէր զայըը
պու խուսուստա տիւլընմէնին սը-
րասը տըր տէյօրլար, գիրապիւր
գարըըզլըզ գուհուրինտէ վէխիս
նէթիճէլէր հասըլ օլաճաղընտան,
անըն էօնիւնիւ ալմազ լազըմ տըր:

Էլփոբանըն թիւրքիս գըթաւ-
սընտա բէք չօգ թէշվիգճիլէր վար
տըր վէ թիւրք հիւքիմէթի իտէ
հուսուլա կէլէճէք մաղարլաթը
ասլա հիսապ իթմէյօր. հիշ տիւ-
շիւնմէյօրի, էկէր Մաքէթոնիա.
նըն պու գարըըզ հալինի նիզա-
մա զօյմազ իտէ, պու էյալէթ տա-
խի կիրիտին հալինէ տիւլար օ-
լաճագ, վէ օրատա մէվճուտ պու-
լընան 180 թապուրլար թիւրքիս-
նըն Էլփոբա սինօրընը էտիրնէ վի-
լայէթինտէն քէսմէկէ տէվլէթլէրէ
մանի օլաճագ:

Թիւրք հիւքիմէթի պու կէ-
տիշի իլէ Մաքէթոնիատա քէնտի
թապասը պուլընան խրիսթիան-
լարը, եանի գաթոլիկ Արնափու-
լարը, Սըրպարը, Բուճէլէրի,
Պուկարլարը, Գուցօուլալարը
վէ Բուլարը, Արնապուրաթի Էր-
մէնիլէրին հալինէ սօգաճագ, Ֆա-
գաթ պուլընարտա պիւր ֆարգ վար
տըր. գիրա հէրնէ գատար Էրմէ-
նիլէր տախի Մաքէթոնիա խրիս-
թիանլարը կիպի Օսմանլը թա-
պասը իտէլէրտէ, Էրմէնիլէր եէք-
տիկէրինէ մուղայիւ բօլիթիգասը
օլան էվրօքա տէվլէթլէրինէ միւ-
րաճաթ իթտիլէր, վէ պինապէ-
րին գուվլէթսիլ տիլլէր, ֆագաթ
Մաքէթոնիա խրիսթիանլարը բէն-
տի հէմճինս միլլէթտալարընա
կիւլէնմէքտէ վէ օնլարտան գուվ-
վէթ ալմագտա տըրլար:

Պուկարլարըն վէ Բուճէլէրին
Մաքէթոնիատաթի գարտալարը
իշիւն եաբաղլարընը կէսրտիք.
շիմտի տախի թիւրք թապասը

օլան Սըրպարը իսկամ Արնավուտ. լարըն նեւոր զուլմընտան գուր- թարմագ իշին Սերպարն թիւրք տէվէթի իլէ գարըն գարըն իս. ճատէլէտէ պուլընտըրըն կէօր. մէքտէյիլ. Սուլթան իսրամ Ար- նավուտարըն իսնանընտան գուր. գարագ անլէրէ մէտէնիլէթէ լէրէ կէթիլէն հէր պիր մէղանիլէթ վէրմիլ վէ օնլարըն էսքի կէտիլի իւզրէ սիւրհ իսթիմալ իթմէսինէ միւսատէ իթմիլ վէ պարպարըն գարարըն մախսուս օնլարըն հա- չէրէթ վէ զատտարըն իթմէկէ սէրպէսթ պըրագմիլ տըր. Արնա- վուտար քէնտի մաճէլլէրինտէ էք. սէրիլէթ թէշքիլ իտէրէր. Սուլ- թան զան իտէրքի Արնավուտար իսթիլալ գալարմագա մուգթմէսի տիրէր:

Սուլթան անլարըն էղհէրէթէթ քէնտի էն սէվիլի էվաուարըն ատտ իտէրէք. Ալպանիտաքի մէմուրարա չէտիտ էմիրէր վէր- միլ տիրէր գահրաման Արնավուտ արա գարըն մուամէլէտէ պուլըն. մաւընլար:

Իշթէ պու սէպէպլէ Եօգարքի Արնավուտըն թապիր օլընտէն է- յալէթին գալմագալարըն վէ միւ- թէսարքիլարըն տօլըն Երարընտան թալին օլընլարըն վէ տօլընտան տօլըն Երարըն մուսապէրէ ի- տէրէր. վէ պուլըն վալիլէրտէն, տախիլիլէն նէղարէթինտէն վէ Սատրապմտան կէլէն էմիրէրի պիլէ չօգ տէֆա իճրա իթմէլլէր. պուլարըն կէօհա վիճուտի Եօգ կիպի թուլմարըն. վէ Արնավուտ- լարըն պէլլէրի իլէ թաւաու. գ. օ- լընաւագ տէրէթէտէ կիւզէր կէչի- նիլէր. Գաթիլէն հիւքիւմէթ Եօգ կիպի տիր, գարընլարըն ու իս- թիլալ միւքէմէլ. Իշթէ պու տըր օրալարըն հալի. խրիսթիանլար օնլարտան էղիլմէքտէ վէ ֆէնա- լըն արթմագա տըր:

Բուսիա վէ Աստրիա հէր վա- զըթ թէշէթէի Պապը Ալիլէ պիլ- տիրիլարըն. պուտէ վաուար ի- տէր. լաքին հիշ պիրիսինի իճրա. իտէմէլ. ֆագաթ էն ֆէնաւը չա- քի ասքէրլէրտէ Սիւպիմանլարըն հայարաթընա զուլվէթ վէ ճէսա- ըթթ վէրմէքտէ տիրէր. Շիմտի պու սըրա իւսքիւպ վէ Գօօօփա վիլալէթլէրիտէ կիրիտան կէլէն

ասքէրլէրին թէճէմիւ օլընաւը ֆէնաւըն տահա արթրիլար. պու- տաքէրլէր կիրիտան ինթիլարըն պուրտըն խրիսթիանլարընտան ալմագ իսթէյարըն:

Տէվէթլէր գարար վէրտիլլէրի պու գըրըն սուլհէրլէր թէտպիր. լէրլէ իգթիլա օլան խաւհաթըն իճրա խալմէսինի հիւքիւմէթտէն թալէպ իթմիլլէր. էկէր տէվէթ- լէրին պու թալէպի կիւզէր նէթի- ճէ վէրմէլ իսէ, իլք պահար թիւրք իմրէրաթըրըն իշին պիր պէտ- պախտ թալիլա ալմագ տըր:

Գօօփա վալիլի Հաֆըլ բաշա- նըն վէրալիլի րարթիլար. Սըրպ էլլիսինին մէճլիլի վի. քէլալա վէր. միլ օլարըն պէլլանտան թաւտիլ իթմէսինտէն նալի, պիր իսլաւաթ ճէտվէլի թէրթիլ օլընմը վէ Սալ- թան թալտիլ իտիլմիլ տիր. ֆագաթ էլան Սուլթանտան ճէ- վապ Եօգ տըր:

ՄՈՒՀԱՐԵՊԻ ԹԷՏԱՐԻՔԻ

Մալիւմ օլարըն իւզրէ, պու սը- րա ինկիլթէրանըն միսիսթիլլէրի ուղու ուղու նուլգար իրաւ իտէրէք պիր թաւաֆտան մուհա- ընպէ գօրգուսը վէրմէքտէ վէ տի- կէր թաւաֆտան տախի թէրքի սիւրհ մէսէլէս իշին Չարա հէմ էքիւր պուլընաւագ տըրլար. Սօն տէֆա օլարագ հարպիլէն նա- զըրը Լանթիլլէր պիր նուլգ ի- րաւ իտուպ. Չարըն թէլլիլլէրին տէն տօլարըն մէմուսինիլ պէլլան իթմէլլէ պէրապէր տէտիլլէ հիշ պիր տէվէթ էլլէրի պշ օթուր- մագ իսթէմէթիլի կիպիպիլալալի պօշտա պուլընաւագ. պուլընլար պէրապէր թէրքի սիւրհ իշին թէ- ճէմիւ օլընաւագ զօթիլլէրան օլա- պիրիլլէրի կիւզէր նէթիլլէ վէրսին վէ խուսուլթիլ իշինալթ պուլընտէն ֆագաթ չիմտի ինկիլթէրանըն տօ- նանալարըն մուգալթմէթ իտիլմէլ պիր հալտա օլմալը տըրլար վէ հէմտէ պիր վալլալթ զուհարինտէ զանն իտէրիլլէրի տիկէր տէվէթ- լէրին տօնանալարըն պիլլիլլէրիլ իլէ մուգալթմէթ իտէմէլլէր. Հիւ- քիւմէթ չիմտի մուհաֆալալըն

տաիր պիլթիւն րաւարըն թէտըն գ իտէյար. էկէր անլէրի քեաֆի կէօ- րիլ իսէ Ենիտէն մէս արիլլէր. գու- լու ալմագալագ տըր:

Ֆրանսա տախի գուլվիլի պահ- րիլլէրին էմալըն նաւէսպու գ աւ- ըլթտէ արթըրագա տըր. Ենի հալըրընլար իշին պիր միլիար ֆրանգ թալիլա օլմալըն տըր. Ֆրանսանըն պու թէշէպպիսի ին- կիլթէրալըն Ենիտէն մէսարիլլէ տիւրա իտէճէք կիպի կէօրիւնի- յօր:

Բուսիա տախի Ենի թօրլար վէ սիւրհլար թէտարիլ իթմէքտէ օ- լարագ. Ալմանիանըն Գրուր ֆագ- րիլագաւարտ սըբարըլար. վէրմիլ տիր. նէ կիւզէր թէրքի սիւրհ:

ԿԻՐԻՏ

Խանըն Եաղարընա պիլնալէն, կէչէն կիւն Շաքիր բաշա կիրիտ- տէն միւֆարէթէթլէ վաթօրա րա- զիպ օլարագաւարտ սօրա, վաթօրըն զէնիլլէրին չէպուպ Եօլա չըգմագ իսթէմէլլէ. տմիրալ Բօթիլ վա- րօրըն հարէթէթ իթմէսինի թա- լէլ իթմիլ, բաշա Պապը Ալիլտէն էմիր օլմաւարըն պէհանէ իթմիլ. Ամիրալ պու ճէվապը տըր ալմալ, տէրհալ բաշանըն րազիպ օլարըն վաթօր իւզրէրին պիր քօրքիլէր Եօլար. Շաքիր բաշա մէգալըրի վաթօր Եօլա չըգարըն իստէ, տէնիլ ֆարթիլլէր օլարընտան. Ճէնուպի իլիմանա կիրէր. վէ էվ- րօրա վաթօրըն տէնիլլէ թէօ- քին օլմաւարտ տէկին րաշանըն վաթօրըն նէղարէթ իտէրլէր:

Ալմանըն իսլաւ վէ խրիսթիան խանէտանլարը Սիլիստա թէճէմ- միւ օլընարագ. պուլընտան սօրա իթի միլլէթ պէլլիլտէ սամիլի մուհալպէթ հուսուլա կէթիլմէք իշին միւզէրէրէ իթմիլլէր:

Խրիսթիանլար կէչէն չարանալա կիւնիւ տիւքնալարը գաւարալալ. թիւրքիանըն զուլմընտան գուր- թուլըն օլարըլարըն իշին չէնիլլէ- լէր իճրա իթմիլլէր. Եպիսկոպոս տախի կիրիտի 200 սէնէլլէք Են- սիրիլլէրէն գուրթարան տէօրթ տէվէթլէր իշին տուվալար օգու- մըն տըր:

Եվրոպա վաթօրըն վէ ասքէր

լէրի տախի կիրիտան չէքիլալ կիլթմէքտէ տիրէր:

Պապը Ալիլ Բիլէն Եօլիլին թալին օլընաւագա գարըն թէլէ- կրաֆիլարէ Եվրոպա տէվէթլէրինէ րօթիլլէր իթմիլ. ֆագաթ պու րօթիլլէրին սէմէրէսիլ գ. րաւագըն զանն օլընաւագա տըր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԼԵ

—Համաթիլէ քիւրտէրինտէն սօ- լուլմալ վէ հարէլլէրին օլան Ալ- մանիալը Ս. Պէրկին մէսէլլէրին- տէն տօլարըն ճանիլլէրին հարպիլ- նիլալըն իւզրէ ճէղալանալարընը Սուլթան էմիր իթմիլ տիր. պուլ- տան պաշա Ս. Պէրկին զարա- լարը թալմիլ օլընաւագ ըմըլ:

—Ինկիլթէրանըն ֆօրմիլլէրալը նամ հարպ վաթօրըն տէնիլլէ Ենտի- ըրիլլէր:

—Ամէրիգա. Սպանիա մուրախ- խաւարըն նուլիւ. 5 տէ Բարիս խա- ըրիլլէր նէղարէթինտէ թէճէմիւ օլընալար. Սպանիալը մուրախ- խաւարըն Ամէրիգանըն պէլլանտէ- սինէ գարըն Սպանիանըն ճէվա- պըն պէլլան իթմիլլէր. «Ֆիլիլլին տաւարընտան Սպանիանըն հու- գուրը հիւքիւմտարիլլէրէ գարըն միւզաքէրլէրէ կիրիլլէրէլ. Եա- լընը մէղքիւր տաւարալա թէր- թիլ օլընաւագ իտարէրին թալըն խուսուլթուս միւզաքէրլէրէ իտէ- պիրիլլէր» տէմիլլէր տիր:

Սպանիանըն պու Եօլա ճէվապը րէտա վէրմէթի հէր հալտէ Ամէրի- գալարըն հիտտէթլէրինտէճէք վէ մէսէլլէ Ենիտէն ալըրլաւագա տըր:

—Լօրտ Չէմպըրլէն թէքար պիր նուլթ իրաւ իտուպ. «Չին մէսէ- լէսինտէ տէվէթլէր միւլթէթիլ գ տիրէր. պախուսուս Ս. Ամէրիգա, ինկիլթէրա վէ Ալմանիա պէլլին- տէ պիր ալմանալ Եօգ իսէ տէ տօլմըն գիլալտէլլէրիլ տիր, զի- րա տիւքնանըն հիշ պիր նոգթա- սընտա Ալմանիա վէ ինկիլլէր մէն- ֆագաթլարըն պիրպիրինէ մուզար տէկիլ վէ պու սէպէպլէ իթի տէվէթ պէլլինտէ իթթիլլէր միւ- քէմէլլէր տիր» տէտիլ:

Отговорникъ М. Скововъ
Печатница "Взаимность"—Варна

ВСЪКОЙ ВТОРИЙ ЛОЗЪ ПЕЧЕЛИ

ПЕРВА ОТЪ ДЪРЖАВАТА ПРИЕТА И ГАРАНТИРАНА

ПЕЧАЛБИ САМО ВЪ БРОЙ

БЪЛГАРСКА КЛАССНА ЛОТАРИЯ

ПЪРВО ГОЛЪМО ПУБЛИЧНО ТЪГЛЕНИЕ СЪ ПЕЧАЛБИ ВЪ СОФИЯ НА 10-Й ДЕКЕМВРИЙ Т. Г.

25000 парични печалби въ цѣла стойность отъ Четири милиони 526,000 л. зл.

НАЙ-ГОЛЪМАТА ПЕЧАЛБА
ВЪ НАЙ-ЩАСТЛИВЪ СЛУЧАЙ: Половинъ милионъ—500000 лева въ злато

НИЙ ПРЕПОРЪЧВАМЕ И ПРАЩАМЕ СЪЩО ВЪ СТРАНА СРЪЩУ БРОЙ.

ОРИГИНАЛНИ ЛОЗОВЕ НА ОФИЦИАЛНИ ЦѢНИ: ЦѢЛИ НА 10 ЛЕВА ЗЛ., ПОЛОВИНА НА 5 Л. ЗЛ., ЧЕТВЪРТЪ 2.50 Л. ЗЛ., ЕДНА ОСМА 1.25 Л. ЗЛ.

ОСКАРЪ БРАЙЕРЪ & С^К ГЛ. КОЛЕКТОРИ

РУССЕ, ПЛОЩАДЪ ЦАРЬ БОРИСЪ.
АДРЕССЪ ЗА ТЕЛЕГРАММИ: „БРАЙЕРБАНКЪ“, РУССЕ.
ТЕЛЕФОНЪ № 43

СОФИЯ, ТЪРГОВСКА УЛИЦА № 4.
АДРЕССЪ ЗА ТЕЛЕГРАММИ: „БРАЙЕРБАНКЪ“, СОФИЯ.
ТЕЛЕФОНЪ № 43